Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
փետրվարի 12 -ի N 128 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՊՈՒՂԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են առևտրի իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենաների միջև ցանցային կապուղիների միջոցով համակարգչային տեղեկատվական տվյալների շտեմարանի ներդրման և շահագործման կանոնները։

2. Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը պարտավոր է ապահովել յուրաքանչյուր վաճառատեղի (այդ թվում՝ առևտրի օբյեկտի) և հարկային մարմնի համար տեղեկատվական տվյալների շտեմարանին միանալու հնարավորությունը և տեղեկատվական միասնական համակարգի անխափան աշխատանքը։

3. Տվյալների շտեմարանն ստեղծվում է համապատասխան համակարգչային ծրագրի (ծրագրերի) միջոցով (այսուհետ՝ ծրագրային փաթեթ), որն ապահովում է անհրաժեշտ տվյալների մուտքագրումն ու մշակումը, ինչպես նաև՝ դրա պաշտպանվածությունն այլ ծրագրերով դիտարկումներից և փոփոխություններից։

4. Ծրագրային փաթեթի միջոցով մուտքագրված տվյալները չպետք է խախտեն ժամանակային անընդհատությունը (ժամանակագրական հերթականությունը) և ամբողջա-կանությունը, ընդ որում, ծրագրային փաթեթը պետք է բացառի հետին ամսաթվով և (կամ) ժամով գործարքների մասին տվյալների մուտքագրումը կամ մուտքագրված տվյալների փոփոխումը։

5. Ծրագրային փաթեթի միջոցով մուտքագրված տվյալները չպետք է հեռացվեն տվյալների շտեմարանից։ Սխալ մուտքագրված տվյալների վերաբերյալ նշում է կատարվում՝ դրանք ճանաչելով անվավեր, և այդ փաստը հաշվառվում է ծրագրային փաթեթի կողմից։

6. Ծրագրային փաթեթը պետք է գործարկվի միայն համապատասխան իրավասություններ և լիազորություններ ունեցող օգտագործողի՝ համապատասխան որակավորում ունեցող հարկային մարմնի աշխատողի կողմից։

7. Տվյալների շտեմարանից օգտվողներին (առևտրի իրականացման վայրի կազմակերպիչ) տրամադրվում է համապատասխան անուն (user name) և ծածկագիր (password)։ Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը հնարավորություն է ստանում միայն դիտելու, կարդալու և պահպանելու իրեն պատկանող առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների մասին տեղեկատվությունը։

8. Տվյալների շտեմարանում պետք է պահպանվեն տեղեկություններ առնվազն նախորդ երեք տարվա վերաբերյալ՝ սկսած տվյալների շտեմարանի շահագործման պահից։

9. Ծրագրային փաթեթը պետք է ապահովի տվյալ առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների ֆիսկալային հաշվետվությունների կազմումը, այդ թվում՝ օրական և ամսական։ Ֆիսկալային հաշվետվությունները պետք է պարտադիր պարունակեն հետևյալ տեղեկությունները՝

1) առևտրի իրականացման վայրի կազմակերպչի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

2) առևտրական գործունեություն իրականացնողի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), վաճառատեղի հերթական համարը, հաշվիչ-դրամարկղային մեքենայի գործարանային համարը, հարկային տեսչությունում հաշվիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի համարը.

3) հաշվետվության կազմման օրը և դրա կազմման ժամանակահատվածը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ